Ո Ր Ո Շ ՈՒ Մ

Արգելադրված գույքը հարկադիր էլեկտրոնային աճուրդով իրացնելու մասին

03. 09. 2021թ. ք. Գորիս

Հարկադիր կատարումն ապահովող ծառայության Սյունիքի մարզային բաժնի ավագ հարկադիր կատարող, արդարադատության մայոր Վահագն Սիմոնյանս ուսումնասիրելով «29» 04 2020թ-ին հարուցված թիվ 06120123 կատարողական վարույթի նյութերը

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

ՀՀ Երևան քաղաքի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի կողմից տրված թիվ ԵԴ/1429/17/20 կատարողական թերթի համաձայն պետք է Սուրեն Սլավիկի Ամիրյանից հօգուտ «Ամերիաբանկ» ՓԲ ընկերության բռնագանձել 3.935.878 ՀՀ դրամ և հաշվարկվող տոկոսներ:

Կատարողական գործողությունների ընթացքում պարտապան Սուրեն Սլավիկի Ամիրյանին պատկանող Սյունիքի մարզի Գորիս քաղաքի Արզումանյան փողոցի Պետ. Համալսարանի հարևանությամբ գտնվող հողամասի գնահատման համար նշանակվել էր փորձաքննություն, որի արժեքը ըստ փորձաքննության եզրակացության կազմել է 8.900.000 ՀՀ դրամ:

Կատարողական թերթի պահանջները կատարելու նպատակով անհրաժեշտ է պարտապան Սուրեն Սլավիկի Ամիրյանին սեփականության իրավունքով պատկանող Սյունիքի մարզի Գորիս քաղաքի Արզումանյան փողոցի Պետ. Համալսարանի հարևանությամբ գտնվող հողամասը ներկայացնել հարկադիր էլեկտրոնային աճուրդի՝ իրացման նպատակով:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 28, 28.1, 43 հոդվածներով և «Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 35.1-35.4 հոդվածներով

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Պարտապան Սուրեն Ամիրյանին սեփականության իրավունքով պատկանող ներքոհիշյալ գույքը

հ/հ	լոտի անվանումը նկարագիրը	գնահատման գինը	մեկնարկային գինը	Գույքի քանակը
1.	**Սյունիքի մարզ, ք. Գորիս, Արզումանյան փողոց, Պետ.Համալսարանի հարևանությամբ գտնվող հողամաս /վկ. համար 1102835, ծածկագիր 09-003-0003-0191/**	**8.900.000**	**6.675.000**	1 միավոր

ներկայացվում է հարկադիր էլեկտրոնային աճուրդի, էլեկտրոնային համակարգի կիրառմամբ՝ հարկադիր կատարման ծառայության աճուրդի էլեկտրոնային կայքի՝ harkadir.ajurd.am միջոցով: Հարկադիր էլեկտրոնային աճուրդի սկիզբը՝ «20» 10 2021թ.

Որոշման պատճենը ուղարկել կողմերին

Որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ Վարչական դատարան կամ վերադասության կարգով, որոշումը ստանալու օրվանից 10 օրվա ընթացքում: ,, Դատական ակտերի հարկադիր կատարման մասին,, ՀՀ օրենքի 28 հոդվածի 5-րդ մասի համաձայն հարկադիր կատարողի որոշման բողոքարկումը չի կասեցնում կատարողական գործողությունները, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

ՅԱՆՈԹՈԹՅՈՒՆ Յուրաքանչյուր լոտի հարկադիր էլեկտրոնային աճուրդի ավարտի հաշվարկային ժամ է համարվում կայքում տվյալ լոտի վերաբերյալ ծանուցումը հրապարակելու 10-րդ օրվան հաջորդող աշխանտանքային օրվա համապատասխան ժամը: Յուրաքանչյուր չկայացած հարկադիր աճուրդից հետո՝ երրորդ աշխատանքային օրը, կայքում զետեղվում է կրկնակի հարկադիր էլեկտրոնային աճուրդի դրված լոտի մասին ծանուցումը:

Եթե աճուրդը չի կայացել գնորդ չլինելու կամ լոտի մեկնարկային գնի հավելում չկատարվելու հիմքով, ապա հաջորդ հարկադիր աճուրդ կազմակերպելուց վաճառվող լոտի մեկնարկային գինն իջեցվում է նախորդ աճուրդի համար սահմանված մեկնարկային գնի տասը տոկոսի չափով: Եթե աճուրդը չի կայացել գնորդի կողմից լոտի գնման գինը սահմանված ժամկետում չվճարվելու կամ առուվաճառքի պայմանագիրը չստորագրելու հիմքերով, ապա լոտի մեկնարկային գնի իջեցում տեղի չի ունենում: Եթե պարտապանն ունի այլ գույք, ապա լոտի մեկնարկային գինը տասներորդ հարկադիր աճուրդից հետո հաջորդ աճուրդներում չի իջեցվում: Եթե պարտապանը չունի այլ գույք, ապա հաջորդ աճուրդներում լոտի մեկնարկային գինը չի իջեցվում քսաներորդ հարկադիր աճուրդը չկայանալու դեպքում:

«Հրապարակային սակարկությունների մասին» ՀՀ օրենքի 35.4 հոդվածի 4-րդ, 5-րդ և 6-րդ մասերի համաձայն երկրորդ և յուրաքանչյուր աճուրդից հետո, լոտը /գույքը/ չվաճառվելու դեպքում պահանջատերը աճուրդի ավարտից հետո երկու աշխատանքային օրվա ընթացքում իրավունք ունի պահանջի դիմաց այն ընդունել այդ աճուրդի մեկնարկային գնով: Պահանջատերը պահանջի դիմաց լոտը իրեն հանձնելու վերաբերյալ գրավոր պահանջը կարող է ներկայացնել Հարկադիր կատարումն ապահովող ծառայություն մինչև չկայացած աճուրդից հետո երկրորդ աշխատանքային օրվա ավարտը: Գույքը /լոտը/ պահանջատիրոջը հանձնվում է վերջինիս կողմից կատարողական գործողությունների կատարման ծախսերը վճարելուց, իսկ գույքի /լոտի/ հանձնման կապակցությամբ հարկեր վճարելու պարտականություն առաջանալու դեպքում նաև դրա կատարումը հավաստող փաստաթղթերը ներկայացնելուց հետո:

ԱՎԱԳ ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՂ **Վ.ՍԻՄՈՆՅԱՆ**